ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2021 թվականի № Ն
քաղ. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՎԱՃԱՌՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №488Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի «դ» և «ը» ենթակետերը, 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի հետևյալ սակագները.

1) 110 կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ 41.98 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 37.98 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և Հանձնաժողովի հաստատած էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի

կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

2) 35 կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ 44.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 40.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

3) 6(10) կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ 50.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 40.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

4) 0,38 կՎ և ցածր լարմամբ սնվող սպառողների (այդ թվում՝ բնակչության) համար, բացառությամբ սույն կետի 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված սպառողների՝

ա. ցերեկային սակագին՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 43.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

5) 0,38 կՎ և ցածր լարմամբ սնվող՝ ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչ սպառողների համար, բացառությամբ սույն կետի 7-րդ ենթակետով սահմանված սպառողների՝

ա. ցերեկային սակագին՝ 46.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 36.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

6) 0,38 կՎ և ցածր լարմամբ սնվող՝ ամսական 201-ից մինչև 400 կՎտժ սպառում ունեցող բնակիչ սպառողների համար, բացառությամբ սույն կետի 7-րդ ենթակետով սահմանված սպառողների՝

ա. ցերեկային սակագին՝ 48.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 38.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

գ. ԷՄԱ կանոններով սահմանված դեպքերում սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումը վերսկսելու, ինչպես նաև սպառողի կողմից ԷՄԱ կանոններով և ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետում և կարգով որակավորված սպառողի կարգավիճակ չստանալու կամ էլեկտրական էներգիայի այլ մատակարար չընտրելու դեպքում սակագինը՝ 53.48 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող սպառողների համար՝

ա. ցերեկային սակագին՝ 29.99 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ. գիշերային սակագին՝ 19.99 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Սույն որոշման 1-ին կետով սահմանված գիշերային սակագները հաշվարկվում են սպառողի մոտ բազմասակագնային էլեկտրոնային առևտրային հաշվառքի սարքի առկայության դեպքում և գործում են.

1) ժամը 22.00-ից մինչև ժամը 06.00-ն՝ յուրաքանչյուր տարվա մարտ ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 02.00-ից մինչև հոկտեմբեր ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 03.00-ն,

2) ժամը 23.00-ից մինչև 07.00-ն՝ յուրաքանչյուր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 03.00-ից մինչև մարտ ամսվա վերջին կիրակի օրվա ժամը 02.00-ն:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի №422Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №488Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
- դեկտեմբերի 2021թ.